

Սերգեյ Ա. Աղաջանյան
Բանասիր. գիյր. դոկտոր

**ՁԱՅՆ ԲԱԶՄԱՑ ԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԻ
ԱՆՍԻԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵԶԸ**

Ըստ Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթի*

Բանալի բառեր – Ղ. Աղայան, «ձայն բազմաց», «ձայն աստուծոյ», ժողովուրդ, ժողբանահյուսություն, գոյաբանություն, կենսաբանական պահանջմունք, դասային գիտակցություն, սոցիալական հիերարխիա, սոցիալական ուտոպիա:

Մուտք

Ժողովրդի իմաստնության վերաբերյալ թևավոր խոսքի հավակնությամբ ստքերի պակաս երբեք էլ չի զգացվել: Նույնիսկ ավելին: Այն էլ այնքան, որ դրանցով կազմվել են աֆորիզմների ժողովածուների առանձին բաժիններ: Այդ ասույթների հեղինակները կա՛մ ստավորականներն են, կա՛մ էլ հենց ինքը՝ ժողովուրդը: **Դրանց բոլորի անթաքույց ասելիքը մեկն է. ժողովուրդն իմաստուն է: Իմաստուն է և՛ իր խոսքի, և՛ իր գործի մեջ: Հետևաբար՝ անսխալական: Այդ մտայնության կանխադրույթն ակնհայտ է. ուղղակի չի կարող իմաստուն չլինել հազարամյակների ընթացքում բազմաթիվ փորձություններով անցած այն բազմությունը, որը, ենթադրվում է, համարժեք կենսափորձ ու հիշողություն է կուտակել: Համահավաք կենսափորձ ու հիշողություն:**

Այդպես մինչև մանավանդ Նորագույն ժամանակները, երբ ակնհայտ դարձավ, որ ժողովուրդ ասված բազմությունը զարմանա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 06.05.2023:

վե՛ր համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 2 (82), ապրիլ-հունիս, 2023

լի հեշտությամբ ուղղորդելի ու կառավարելի է: Եվ հենց հավաքական կամքով ու վարքագծով հաճախ անում է այնպիսի բաներ, առաջնորդվում կենսորոշման այնպիսի գաղափարներով, որոնք չեն կարող լուծել իր գոյաբանական խնդիրները:

Հետաքրքիրն այն է, որ այդ առաջնորդող գաղափարները հաճախ լինում են ոչ միայն դրսեկ-ներմուծված, այլև անգամ իր կենսափորձից ածանցված: **Եվ հենց դա է, որ լրջորեն կասկածելի է դարձնում ժողովրդի անսխալականության ու հավաքական իմաստնության թեզը:**

Նման իրավիճակներում ցանկացած համակեցության մեջ ակնհայտ է դառնում երկու կարգի մտավորականների վարքագիծը: Մեկը՝ սթափության կոչող և անիմաստ մաքառման դոնկիխոտյան սինդրոմը կրողները, մյուսը՝ ժողովրդի իմաստնության վերաբերյալ հին ու հոգնեցնելու չափ ձանձրալի դարձած երգը ժողովրդի ականջին անդադար կրկնողները: Վերջիններս էլ գիտեն, որ դա այդպես չէ, և իրենց արածը երեսպաշտություն է: Բայց լավ գիտեն նաև, որ դա է Սիրենների¹ կախարդական այն երգը, որով ժողովրդին հնարավոր է առաջնորդել այնտեղ, որն ամենից քիչ ժողովրդին ու ամենից շատ հենց իրենց է պետք:

Դեռևս Անտիկ ժամանակներում էր գտնվել ժողովուրդ կամ բազմություն ասված համահավաքության չեզոք բնորոշում-բանաձևը՝ «Ձայն բազմաց ձայն Աստուծոյ» (Հեսիոդոս), ինչը, հակառակ տարածված թյուրըմբռնման, ամենևին էլ չի նշանակում, որ բազմության (ժողովրդի) ձայնն իմաստնության ձայնն է, այլ ընդամենն այն, որ բազմության ձայնը պիտի ընդունել, նկատի ունենալ որպես փաստ, իրողություն, ինչի խորքը տեսնելն անհրաժեշտություն է:

Ձայն բազմացի աշխարհատեսության, կենսորոշման սկզբունքների, կենսափորձային ճշմարտությունների, առաջնորդող գաղափարների շտեմարաններից մեկն էլ ժողբանահյուսությունն է: Այն անխառն տիրույթը, որում առանց կողմնակի միջամտության ու սրբագրման դրսևորվում է, թե այս կամ այն կենսական իրավիճակում առաջնորդվելու համար ժողովուրդն իրեն հասանելի գաղափարներից որն է գերադասում ու դարձնում գործունեության ուղենիշ:

¹ Հունական առասպելական հերոսներ, որոնք իրենց երգով գայթակղում էին ծովագնացներին և մահվան մատնում:

Որպես կանոն, ժողովրդական բանահյուսությունն ընդունվում է անքննադատ: Իսկ դա արդեն իսկ վտանգավոր է, որքանով որ անտեսում է մի պարզ իրողություն. յուրաքանչյուր ժողովուրդ հաճախ գոյատևման ու հացի օրախնդիր հարցեր լուծելու անհրաժեշտություն է ունենում, որը տեղ ու ժամանակ չի թողնում կենսական իրավիճակների խորքային ըմբռնմանը, համարժեք կենսորոշիչ գաղափարաբանության ձևավորմանը:

Ուրեմն էլ ինչո՞ւ է ստեղծվում ժողբանահյուսությունը, պատմվում սերնդեսերունդ, ներառվում ուսումնական ծրագրերում: Ակնհայտ մի նպատակով՝ հատկապես նոր կյանք մտնող սերնդին սոցիալականացնելու՝ կենսական ճշմարտություններ փոխանցելու, համակեցական համարժեք վարքագիծ ձևավորելու համար: Եվ հենց այստեղ է, որ ժողովրդական բանահյուսության անքննադատ յուրացումը կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների: Չէ՞ որ կենսափորձային այդ ճշմարտություններով է նաև, որ ձևավորվում են վաղվա հասուն մարդու ստերեոտիպային կենսորոշումը և արժեհամակարգը, ինչն անքննադատ մտածող գերակշիռ մեծամասնության համար դառնում է, պայմանականորեն ասած, սոցիալական բնագոյ, այլընտրանք չընդունող, այլակարծություն չհանդուրժող համոզմունք, ծրագրավորված վարքագիծ:

Ասվածի առումով բնորոշ ու հետաքրքիր օրինակ է Ղ. Աղայանի ամենասիրված, ամենահայտնի, սերնդեսերունդ ուսուցանված հեքիաթներից մեկը՝ «Անահիտը»:

1. «Անահիտը» հեքիա՞թ է

Հայտնի իրողություն է, որ «Անահիտը» (1881) ընթերցողին հայտնի դառնալուն պես արժանացել է հիացմունքի, բարձր գնահատվել իր բովանդակության համար: Միակ խնդիրը, որով 1909 թ. խոսք ու գրույց է առթել այս ստեղծագործությունը, եղել է, պայմանականորեն ասած, ժանրային պատկանելությունը. ժողովրդական հեքիաթի մշակո՞ւմ է այն, թե՞ այլ տեղից վերցված այուժե՞²: Թեև Ղ. Աղայանի ստեղծագործությանը, մանկավարժական հայացքներին ու գործունեու-

2 Տե՛ս Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Եր., 1994, էջ 367-369:

թյանն անդրադարձած գրեթե բոլոր հետազոտողներն էլ³ չեն անտեսել այդ փաստը, բայց արժե մեկ անգամ ևս վերհիշել իրողությունը:

«Անահիտի» նյութի կամ ժանրի վերաբերյալ կասկածները 1912 թ. տպագրված հոդվածով փարատել է Հովհ. Թումանյանը: Առիթը եղել է Լ. Մանվելյանի տեսակետը, որը հանրությանն է ներկայացվել 1909 և 1911 թթ.: Հովհ. Թումանյանի կարծիքը միանշանակ է. «Անահիտը» ժողովրդական հեքիաթի հիմքով է շարադրվել, ինչի օգտին նա երեք կարևոր փաստարկ է վկայակոչել: Նախ՝ կան համանման բովանդակությանը հայկական և վրացական հեքիաթներ, և Ղ. Աղայանը ծանոթ է եղել դրանց. «Աղայանը գիտեր էր հեքիաթի հայկական երկու վարիանտը»⁴: Հետո՝ չպետք է անտեսել հենց հեղինակի՝ Ղ. Աղայանի խոսքը, որը կցված է «Անահիտի» առաջին հրատարակությանը. «Էդ հրատարակության ճակատին գրված է «**Հին գրույց**» (ընդգծումը Հովհ. Թումանյանին է – Ս. Ա.), «Ազգային բանավոր գրույցներից առնված»»⁵: Եվ վերջապես՝ Հովհ. Թումանյանն ինքն էլ համոզված էր, որ Ղ. Աղայանի ստեղծագործությունը ժողովրդական հեքիաթի հիմքով է շարադրվել, հետևաբար հեքիաթ է. «Աղայանի «Անահիտի» և Թաղիադյանի «Վարսենիկի» մեջ չկա էն նմանությունը, ինչ որ կա հայ ժողովրդական հեքիաթի և Աղայանի գործի մեջ, որ նույնն է ամենայն հարազատությամբ»⁶:

Հոդվածի վերջում Հովհ. Թումանյանը հարկ է համարել նաև լրացուցիչ բացատրություն–հիմնավորում տալ Ղ. Աղայանի ստեղծագործության մեջ պատմականության տարրի ակնհայտության և կոնկրետության վերաբերյալ, որը չափազանց է նույնիսկ իրապատում հեքիաթների համար. «... Էդ էլ կարելի է պարզ տեսնել «հավելվածից», որը դրել է (Ղ. Աղայանը – Ս. Ա.) նույն հրատարակության վերջում հետևյալ վերնագրի տակ. «Մովսես Կաղանկատվացու պատ–

3 Տե՛ս «Աղայան Ղազարոս: Գիտաժողովի նյութեր», Վանաձոր, 2010, 180 էջ: Տե՛ս նաև **Ասատրյան Ա.**, Ղազարոս Աղայան: Կյանքն ու գործունեությունը, Եր., 1940, 128 էջ, **Ավթանդիյան Ա.**, Ղազարոս Աղայանի աշխարհայացքը, Եր., 1983, 103 էջ, «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Եր., ՀՀ ԳԱԱ, 1964, 758 էջ («Ղազարոս Աղայան» գլխի (էջ 270-326) հեղինակն է Ա. Ասատրյանը), **Մուրադյան Հ.**, Ղազարոս Աղայան (կյանքն ու գրական գործունեությունը), Եր., 1941, 114 էջ, **Տերտերյան Ա.**, Հայ հայրենասեր գրողներ (երկու դիմագիծ): 1. Հ. Թումանյանի հայրենասիրական պոեզիան: 2. Ղ. Աղայանը և ժողովրդական հերոսությունը, Եր., 1942, 140 էջ, **Հակոբջանյան Ա.**, Ղազարոս Աղայան: Գեղարվեստական ժառանգությունը, Ստեփանակերտ, 2007, 495 էջ և այլն:

4 **Թումանյան Հովհ.**, նշվ. աշխ., էջ 369:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում, էջ 368-369:

մութունից մի ծանոթություն Վաչագանի ժամանակումն եղած չար և դիվական աղանդների մասին»⁷: Ասել է թե՛ հեքիաթի հեղինակը բանահյուսական նյութը մշակել-վերաշարադրել է որոշակի նպատակադրմամբ՝ այն հարստացնելով կոնկրետ պատմական ժամանակաշրջանը խորհրդանշող իրողություններով, նշանավոր գործիչների թեկուզ պայմանական ներկայությամբ, աշխարհագրական անուններով և այլն:

Իհարկե ճիշտ է Հովհ. Թումանյանը, և «Անահիտին» ցանկացած անդրադարձ իմաստավոր է առաջին հերթին այնքանով, որքանով որ հետևողական է հեղինակի նպատակադրում-ասելիքի մեկնաբանության և ոչ թե ժանրային առանձնահատկությունների կամ ծագումնաբանության հարցերում: Մանավանդ որ Ղ. Աղայանի ակնհայտ նպատակը պատմական ավելցուկով ոչ այնքան հեքիաթի իրապատում լինելը համոզիչ, որքան նրա գաղափարաբանությունը հնարավորինս փաստարկված, հավաստի, նույնիսկ անվիճելի դարձնելն է:

Ահա հենց այստեղ է «Անահիտի» խնդիրը, ինչը չի դիտարկվել՝ չնայած նրան բազմաթիվ հեղինակների անդրադարձներին: Իսկ խնդիրը հետևյալն է. բանահյուսական նյութի մշակմամբ ստացվել է մի տեքստ, որի գաղափարաբանությունը, հակառակ ասելիքը հնարավորինս համոզիչ ու ծանրակշիռ դարձնելու հեղինակի ջանքերին, ազգային կյանքում առկա հրատապ խնդիրների լուծման միջոցներ առաջադրելու ազնիվ մղումներին, ընդունելի չէ: Այլ կերպ ասած՝ իբրև վերացական ճշմարտություն ընդունելի գաղափարն անընդունելի է դրա մարմնավորման համար շարադրված կոնկրետ պատումի տարբերակում: Այդ իրողության անտեսման հետևանքով է, որ տասնամյակների ընթացքում «Անահիտի» նկատմամբ ձևավորվել է միանշանակ հիացական վերաբերմունք: Ահա մի օրինակ. ««Անահիտով» (1881) սկսվում է Աղայանի հմայիչ հեքիաթների մարգարտաշարը և դա է այն նշանակալից ստեղծագործությունը, որը և դառնում է հայ հեքիաթագրության հիմնաքարը...»⁸:

Ասացի, որ «Անահիտի» ժանրի հարցը բազմիցս քննարկվել է «հին գրույց» (ըստ հեղինակի գրառման), թե հեքիաթ լինելու հար-

7 Նույն տեղում, էջ 369:

8 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, էջ 312:

ցադրումով: Ավելի ընդունված է այն հեքիաթ համարելը, բայց կա նաև այսպիսի մեկնաբանություն, որը, կարծում եմ, ձշմարտությանը մոտ լինելու հիմքեր ունի. «Անշուշտ՝ «Անահիտ» առավելապես պատմական «հին գրույց» է՝ հեքիաթային սյուժեի առկայությամբ: ...դրանց առկայությամբ էլ որոշվում է նաև «գրույց»-ում պատկերված գործողությունների կոնկրետ ժամանակը»⁹: Դիտարկման հեղինակը չի կոնկրետացնում ժամանակաշրջանը, բայց, ըստ «Անահիտ»-ում հիշատակվող պատմական անունների, դա Վաղ միջնադարն է:

Իսկապես որ գրուցային ակնհայտ ու ընդարձակ տարածք կա «Անահիտ»-ում, ինչը դիտարկելի է ոչ միայն ստեղծագործության բովանդակությանը համոզչություն, փաստարկվածություն հաղորդելու հեղինակի նպատակով, այլև ստեղծագործական մաներայի առումով: Եվ դա վերաբերում է «Անահիտ»-ում հեղինակի անթաքույց, նույնիսկ ակտիվ մարտնչող ներկայությամբ: Ղ. Աղայանն այս դեպքում ոչ թե օբյեկտիվ-չեզոք շարադրող է, այլ գործողությունների ակտիվ մասնակից, իրադարձությունները գնահատող-մեկնաբանող (նաև իր խոսափող հերոսների միջոցով), ինչի հետևանքով դարձել է առաջին պլանի գաղափարախոս, բանավիճող, իր ձշմարտությունն ընթերցողին պարտադրող:

2. Ղ. Աղայանի ձշմարտությունը

«Անահիտի» գաղափարաբանությունը հոգեհարազատ է Ղ. Աղայանի աշխարհայացքին, որով ինքն էլ առաջնորդվել է գործնականում և՛ որպես ստեղծագործող, և՛ որպես ուսուցիչ: Ընդհանրապես, ի պատիվ իր ժամանակի համար երևելի մտավորական Ղ. Աղայանի, պիտի նշել, որ նրա մարդկային ազնիվ նկարագրի բնութագրական գծերից մեկն էլ այն էր, որ նա ապրում էր՝ առաջնորդվելով նույն գաղափարներով, որոնց ակտիվ տարածողն ու կենսագործողն էր: Եվ իհարկե պատահական չեն այն հարգանքն ու նույնիսկ պատկառանքը, որ վայելում էր նա նույնիսկ կենդանության օրոք¹⁰: Հայտնի է նրա՝ ժամանակի համար առաջադիմական ու նշանակալի վաստակը նոր սերնդի կրթության և դաստիարակության ոլորտում («Խորհրդածություններ

⁹ Նույն տեղում, էջ 313:

¹⁰ Տե՛ս «Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», Եր., 1967, 529 էջ:

դաստիարակության վերա»), դպրոցներին անհրաժեշտ դասագրքեր կազմելու, մանկական ամսագիր ունենալու («Աղբյուր», 1883-1918) գործում և այլն: Լուսավորիչ-մանկավարժի նրա աշխարհայացքի կարևոր առանցքներից էր ոչ միայն մայրենիի ուսուցման, այլև ֆիզիկական ու աշխատանքային դաստիարակության, կանանց հասարակական դերի խիստ կարևորումը: Իսկ աշխատանքային դաստիարակության մեջ՝ հատկապես արհեստագործության կարևորումը՝ ելնելով դրա նաև սոցիալ-տնտեսական դրական նշանակությունից: Այն իսկապես կարող էր բարելավել աշխատավոր մարդու կենսամակարդակը, դառնալ տնտեսական կյանքի վերելքի լծակներից մեկը:

Հասարակական գիտակցության մեջ առաջադիմական իր այդ գաղափարները հասկանալի, տպավորիչ դարձնելու և ամրակայելու համար Ղ. Աղայանը դիմել է նաև ժողբանահյուսության օգնությանը: Այդ առումով ձիշտ է հետևյալ նկատառումը. «Աղայանը ջանում էր ժողովրդի կենսափիլիսոփայությունը դարձնել իր հասարակահայեցության դրսևորման միջոց: Այդ տեսակետից խիստ հատկանշական է «Անահիտը»¹¹: Հեքիաթի պատումը շատ հարմար ու համապատասխան է եղել գրողի ունեցած գաղափարներին, որովհետև ««Անահիտի» սյուժեն խարսխված է ստեղծագործ աշխատանքի, արհեստի հասարակական նշանակության ժողովրդական կենսափիլիսոփայության հիմքի վրա....»¹²:

Ինչ խոսք, աշխատանքային դաստիարակությունը, նաև արհեստագործության միջոցով, արդիական է անգամ մեր օրերում: **Սակայն գարմանալիորեն աննկատ է մնացել, որ «Անահիտ»-ում այդ գաղափարն իր գործադրման տեղում (վերնախավ, թագածառանգ) հարկի չէ: Իհարկե, դա ժողովրդի սոցիալական ուտոպիայի դրսևորումն է, որին կարելի էր ըմբռնումով մոտենալ (հեքիաթներից շատերին է բնորոշ սոցիալական ուտոպիան), եթե մերժելի չլիներ: Սակայն պարզվում է, որ նման տարօրինակ իրողությունը (թագածառանգի համար կենսական անհրաժեշտություն է արհեստ իմանալը) կարող էր մարքս-լենինյան գաղափարախոսության ոգով նաև այսպիսի մեկնաբանություն ունենալ. «Եվ եթե մի կողմ դնենք Աղայանի սոցիալական ուտոպիայի քրիստոնեական-կրոնական**

11 Հակոբջանյան Ա., նշվ. աշխ., էջ 369:

12 Նույն տեղում, էջ 374:

կեղևը...., ավելի ակնբախ կդառնա նրա (Ղ. Աղայանի սոցիալական ուտոպիայի – Ս. Ա.) կենսական միջուկը, մասնավոր սեփականության, ամեն տեսակի ճնշման ու սոցիալական անհավասարության վերացման, անդասակարգ հասարակարգի ստեղծման անհրաժեշտության գաղափարը»¹³:

Ակնհայտ է ժողովրդին ընդօրինակած Ղ. Աղայանի՝ սոցիալական ուտոպիան, մարդկային երջանիկ կյանքի երազանքի ու ձգտման լուսավորչական կողմնորոշումը մարքս-լենինյան գաղափարախոսության տարածք տեղափոխելու միանգամայն անհարկի ճիգը: **Մինչդեռ պետք էր ավելի հետևողական լինել և պարզել, որ իր սոցիալական ուտոպիայի գեղարվեստական մարմնավորման մեջ ժողովրդին հետևելով՝ հեղինակը լրջորեն վրիպել է: Սա այն դեպքն է, երբ մտավորականը պետք է ավելի շրջահայաց լիներ (ժողովրդի նկատմամբ մեծագույն սիրով հանդերձ) և «ձայն բազմաց»-ի ճշմարտության մասին թեզը նույնությամբ կրկնելուց առաջ ձշտեր դրա համակեցական օգտակարության հավանականությունը:**

Թերևս կարելի էր և չանդրադառնալ Ղ. Աղայանի այս ստեղծագործությանը, եթե չլինեին նրա նկատմամբ համաժողովրդական սերը և «ձայն բազմաց»-ի գաղափարախոսությունից պահպանված այս բացահայտ միտումը, ինչն ուղղված է սոցիալական շերտերի ի պաշտոնե պարտավորությունների ոչնչացմանը: Եվ պատահական չէ, որ դա հիմք է դարձել համանման մակերեսայնությամբ ձևավորված հետևյալ պաթետիկայի համար. ««Հին գրույցի» հիմնական գաղափարը հեքիաթում մարմնավորված է ոչ թե թագավորի, այլ թագուհու անձնավորության մեջ (սա ճիշտ է նկատված – Ս. Ա.): Բայց չէ՞ որ Անահիտը թագուհի դառնալով՝ իր բարոյական կերպարով, իր սոցիալական էությանը ամենևին չի փոխվում: Ոչ թե երբեմնի գեղջկուհին՝ նախքան Առանի աղջիկն է ենթարկվում թագավորական ընտանիքի սոցիալ-բարոյական սկզբունքներին, այլ՝ ընդհակառակը, մինչ այդ ժողովրդից վեր կանգնած ու ժողովրդին հակադրված թագավորական ընտանիքն է ենթարկվում գեղջկուհու սոցիալ-բարոյական սկզբունքներին, որի հաղթանակը ստեղծագործ աշխատանքի հրաշագործ ուժի հաղթանակն է: Երբեմնի գեղջկուհու՝ Անահիտի իմաս-

13 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, էջ 281:

տությամբ է խորտակվում երկրային «դժոխքը և մեր աշխարհը» վերփոխվում «մի եդեմական դրախտի»¹⁴:

Կարծում ենք՝ սա անհարկի պաթետիկա է, որը ծնվել է Ղ. Աղայանի լուսավորական ուտոպիայով և ժողովրդի իմաստնությամբ հիացած սոցիալիզմի գաղափարակիր մտավորականի ընկալումներից: Անհարկի, որովհետև Ղ. Աղայանի պատումը ներկայացնում է ճիշտ հակառակը՝ ոչ միայն հանդուրժող, այլ նաև Անահիտով հիացած թագավորական ընտանիք ու վերնախավ, ժողովրդի բարօրության համար շահագրգիռ թագաժառանգ ու թագավոր և այլն: Ինչ վերաբերում է երկրային դժոխքը խորտակելուն և երկիրը եդեմական դրախտի վերածելուն, ապա դա ասվում է հեթանոսների ստեղծած տաժանակրության օջախը ոչնչացնելու առնչությամբ:

Միանգամայն այլ հարց է, թե որքանով է հանդիչ թագավորական ընտանիքի և վերնախավի այդչափ ոչ միայն հանդուրժող, այլև անգամ հիացական վերաբերմունքն Անահիտի գաղափարի ու վարքագծի նկատմամբ: Մինչդեռ պետք էր արձանագրել, որ «Անահիտ»-ում հեղինակը, ցավոք սրտի, ընդօրինակում է բազմության ճշմարտությունը՝ չնկատելով դրա գործադրման տեղի՝ համակեցական օրինաչափ առաջնահերթությունների առումով անընդունելիությունը: Իսկ «...Հեքիաթի հիմնական գաղափարը աշխատասիրության փառաբանումն է»¹⁵ փաստարկմանն իհարկե կարելի էր նաև չառարկել, եթե դրա ստվերում չմնար նրա հավելյալ բովանդակությունը, ինչի վերաբերյալ կասվի ստորև: Միայն նշենք, որ հեքիաթը կամա-ականա հօգուտ մի այլ ճշմարտության է, ինչն անտեսելը լուրջ բացթողում է:

3. Թագաժառանգն արհեստավո՞ր

Հայտնի են բազմաթիվ ասույթներ արհեստի իմացության օգտակարության և կարևորության մասին, օրինակ՝ «Արհեստավորը մինչև կեսօր ա սոված մնում», «Փեշակը ոսկի ա» և այլն: Անշուշտ, ցանկացած համակեցության և անհատի համար արհեստի և արհեստագործության կարևորությունն անվիճելի է: **Բայց պետք է նկատի ունենալ նաև, որ ընդհանուր առմամբ ընդունելի այդ ճշմար-**

14 Նույն տեղում, էջ 314:

15 **Շահինյան Ա.**, Աղայանը հեքիաթագիր, «Աղայան Ղազարոս: Գիտաժողովի նյութեր», էջ 85:

տությունն առաջին հերթին նպատակաուղղված է մարդու բնական-կենսաբանական պահանջմունքները բավարարելուն՝ ապրուստի միջոց հայթայթելուն, ինչի առաջնահերթությունն անժխտելի է: Բայց դա դեռևս չի նշանակում, որ սոցիալական բոլոր շերտերի կեցության ու կյանքի իմաստը սկսվում և ավարտվում է այդ պահանջմունքի բավարարումով կամ ֆետիշացումով: Թերևս ավելորդ է հիմնավորելը, որ հասարակության շերտերից յուրաքանչյուրը մյուսից տարբերվում է համակեցական իր դերով ու գործառույթով, կեցության իմաստավորման առաջնահերթություններով և այլն:

Ինչ վերաբերում է Անահիտին ու նրանով ներկայացող մարդկային բազմության կենսական առաջնահերթություններին, ապա դրանք անմիջապես բացահայտվում են այն պահին, երբ Անահիտը ստանում է դիպակ գործել սովորած թագաժառանգ Վաչագանի նվերը: Նպատակին հասած Անահիտը բացահայտում է իր պայմանի բովանդակությունը.

- Հիմա ոչինչ չունիմ ասելու.

Երբ կանձարանա,

Զուլհակ կդառնա¹⁶:

Իր կարգավիճակով պայմանավորված՝ օրվա հաց վաստակելու մտահոգություն ունեցողի կենսորոշում, որը գործադրելի չէ կառավարչի, առավել ևս երկրի ճակատագրի համար պատասխանատվություն կրողի նկատմամբ: Սա է Ղ. Աղայանի ստեղծագործության գաղափարաբանությունը դարձնում անընդունելի:

Ընդ որում, գաղափարը ոչ միայն անընդունելի է գործադրման տեղով, այլև անհամոզիչ՝ այն կրող ու պարտադրանքի պես թելադրող Անահիտի վարքագծով: Թեև կիրթ պահվածքով ու չափված-ձևված խոսքով, բայց իր սոցիալական կարգավիճակին անհամապատասխան վճռի պես է նա խնամախոսների համար բացահայտում ամուսնության իր նախապայմանը: Մինչդեռ նա չէր կարող նախապայման դնել: Բայց թերևս ավելի կարևոր ու անհամոզիչ է այն, որ պատգամախոսները, թագավորը, թագուհին, թագաժառանգը, երկրի իշխանավորները մի թույլ զարմանք-դիմադրությունից հետո ընդունում են նրա պայմանը: **Երկրի վերնախավի բոլոր ներկայացուցիչ-**

¹⁶ «Հայկական հեքիաթներ», Եր., 2014, էջ 149:

ներից և ոչ մեկը զարմանալիորեն գլխի չի ընկնում, որ Անահիտը պայման դնելով և իր դրած պայմանի բովանդակությամբ քանդում է հաստատված համակեցական կառույցը՝ գլխիվար շրջելով հիերարխիկ սանդղակի ուղղահայացը:

Դիտարկելի է նաև այն հանգամանքը, որ իր գրագիտությամբ, համագյուղացիների համար լուսավորական գործունեությամբ, խելքով ու շնորհքով Ղ. Աղայանի հիացմունք Անահիտն էլ չի գիտակցում, որ իր նախապայմանը (ըստ էության՝ պարտադրանքն անհույս սիրահարին) անտրամաբանական է թագաժառանգի դեպքում: **Եվ վերևների ու ներքևների այդ բազմության մեջ ոչ ոք չի զարմանում, որ աշխարհի բոլոր ժամանակների ու ժողովուրդների կառավարիչներից (ոչ հեքիաթային), իմաստուններից ոչ մեկը երբևէ գլխի չի ընկել, թե թագավորի կամ թագաժառանգի համար որքան կարևոր է որևէ արհեստի իմացությունը:** Մինչդեռ շատ ավելի համոզիչ կլիներ, եթե Անահիտը դներ ամուսնական այնպիսի նախապայման (պայմանականորեն ընդունենք, որ դա հնարավոր էր), որը կհամապատասխաներ Վաչագանի սոցիալական դիրքին ու դերին. չէ՞ որ նա ի ծնե կանխորոշված լրջագույն պարտավորություն և պատասխանատվություն ուներ պետության ու ամենքի առաջ: Եվ եթե վաղը-մյուս օրվա թագավորից հարկի ու ճիշտ էր արհեստի իմացություն պահանջելը, այդ դեպքում ումի՞ց պահանջել երկրի կառավարման հմտություններ ու կարողություններ, ի՞նչ գիտելիքով ու ինչի՞ իմացությամբ: Իհարկե, «Անահիտ»-ում կա դրա ժողովրդական-աղայանական պատասխանը, ինչին կանդրադառնանք իր տեղում:

Անահիտի՞ թագաժառանգին պարտադրած պայմանի անհարկի լինելու մեջ համոզվելու համար կարելի է հակառակը երևակայել: Որքանո՞վ համոզիչ ու տրամաբանական կլիներ, եթե թագավորը մի հրահանգով իր ժողովրդին պարտադրեր, իր բան ու գործը թողած, երկրի կառավարման հմտություններ սովորել. չէ՞ որ նրանցից յուրաքանչյուրն էլ Անահիտին պատահած մի հրաշքով կարող էր թագավոր դառնալ:

Մի խոսքով՝ Անահիտի դրած ամուսնական նախապայմանը օրվա հացի հոգս ունեցող շարքային մարդու համար է պիտանի և ոչ թե թագաժառանգի: Նրա առաջ այլ պայման էր պետք դնել, եթե դա անհրաժեշտություն էր:

Ուշագրավ է, որ հարսնախոսության գնացած պալատականները, լսելով Անահիտին, ամաչում են (բացի Վաղինակից), որ արհեստ չգիտեն: Հետևաբար սրանք էլ, թագավորն ու թագուհին էլ չեն գիտակցում իրենց սոցիալական դասի պարտավորություններն ու գործառույթները: Այլապես նրանք բոլորը հանկարծ ու միանգամից նշանակալի գյուտ արածի պես «հայիլ-մայիլ» չէին լինի Անահիտի խելոքությունից: Որքան էլ զարմանալի է, այս մարդկանց մեջ չի խոսում նույնիսկ դասային արժանապատվությունը՝ որպես ընդդիմություն իրենց առջև դրված անվայելուչ նախապայմանին. չէ՞ որ իրենք սրբացված համակեցական ավանդույթով ու օրենքով իրենց սոցիալական սանդղակի ու գործառույթի մեջ են: Իսկ մարդկության այդ ժամանակաշրջանի (Միջնադար) մշակութաստեղծ գործունեությունն ու համակեցությունն ունեին իրենց դրվածքի անխախտության հստակ գիտակցումը. «Общественный порядок воспринимался и осознавался как богоустановленный и естественный»¹⁷:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ վերնախավի սոցիալական-դասային գիտակցության ու արժանապատվության վերաբերյալ ասածս «Անահիտի» տեքստում չէր կարող հենց այնպես հայտնվել: Դա ըստ պատշաճի ձևավորելու և ընթերցողին ներկայացնելու պարտավորությունը տեքստի հեղինակինն է:

4. Համակեցություն և կերպարակերտում ըստ կանխադրույթի

Բազմիցս և իհարկե ճիշտ է նկատվել, որ «Անահիտը»՝ որպես ստեղծագործություն, մարմնավորում է Ղ. Աղայանի ուտոպիան աշխատասեր, բարեպաշտ կառավարչի, երջանիկ համակեցության և այլ պատկերացումների վերաբերյալ: Սակայն այս դեպքում խնդիրը միայն այն չէ, որ «Պարզունակ է այդ հասարակարգը, զերծ ներքին հակասություններից ու դասակարգային հակամարտություններից»¹⁸: Կա շատ որոշակի և՛ ներքին հակասություն, և՛ հակամարտություն պատմականորեն ձևավորված սոցիալական կարգ ու դրվածքի դեմ:

17 Гуревич А., Категории средневековой культуры, М., 1984, с. 211.

Թարգմանությունը՝ ըստ բովանդակության. «Հասարակական կարգն ընդունվում ու գիտակցվում էր որպես աստծուց տրված և բնական»:

18 Հակոբջանյան Ա., նշվ. աշխ., էջ 381:

Դա ժողովրդի աշխարհընկալմամբ ձևավորված սոցիալական ուտոպիայի բովանդակության մեջ է, ինչը համապատասխանել է Ղ. Աղայանի աշխարհայացքին ու դարձել ընդօրինակման նյութ: Եվ խնդիրը հենց այդ ուտոպիան է, որովհետև այն անցնում է համոզիչ լինելու համար թույլատրելիի, համակեցական դրվածքների ու նույնիսկ գեղարվեստորեն համոզիչ լինելու համար անհրաժեշտ նվազագույնի սահմանը: **Դրա արդյունքում հեղինակը, հետևելով ժողովրդական աշխարհընկալմանը, ստեղծում է մի այնպիսի գեղարվեստական իրականություն, որը ոչ միայն հնարավոր ու համոզիչ չէ, այլև անգամ անընդունելի է իր գաղափարական բովանդակությամբ: Ժողովրդական ստեղծագործությունը վերցնել-մշակելով՝ Ղ. Աղայանը որդեգրել է դրա գաղափարախոսությունը:**

«Անահիտի» ողջ տեքստից ստացվող տպավորությունն այն է, որ հեղինակին չի հաջողվել համոզիչ դարձնել իր ասելիքը, թեև այդ ուղղությամբ ջանքեր է գործադրել, ինչի մասին արդեն ասվել է հողվածի սկզբում: Գլխավոր պատճառներից մեկն էլ թերևս գեղարվեստական-ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ այն նախապայմանի անտեսումն է, որը հեղինակից պահանջում է վերապրել իր հերոսների համակեցական-սոցիալական գործառույթներով պայմանավորված դերային կարգավիճակը, նրանց վարքն ու նկարագիրը համոզիչ դարձնել ըստ դրա: Մինչդեռ Ղ. Աղայանն իր հերոսների վարքն ու էությունը, ստեղծագործության սյուժեն, ներկայացրած համակեցական իրականությունը ձևել է ոչ թե կենսական և գեղարվեստական համոզչության սկզբունքով, այլ ըստ իր ունեցած կանխադրույթի¹⁹:

Նման ստեղծագործական մաներայի դեպքում բացահայտ ու անցանկալի է դառնում տեքստի հեղինակի դիրքորոշման ակնհայտությունը, ինչը «Անահիտ»-ում դրսևորվել է ինչպես կերպարների մարմնավորման, բանավիճային շեղումների, այնպես էլ տեքստի հուզական հագեցվածության (անթաքույց հիացմունք, համակրանք կամ հակակրանք) մեջ: Վերջին դեպքում (հուզական հագեցվածությամբ մատուցվող տեքստ) աշխատել է հանրահայտ ձշմարտությունը, որի դիպուկ բնորոշումը Գ. Լեբոնինն է. «Идеи влияют на поведение

19 Գեղարվեստական-ստեղծագործական գործունեության մեջ հեղինակի փոխակերպվել-վերամարմնավորվելու կարողության և անհրաժեշտության մասին տես **Աղաջանյան Ա.**, Գուրգեն Մահարու արձակի պոետիկան, Եր., 2011, էջ 243-250:

только после того, как преобразовались в чувства»²⁰: Քանի որ Ղ. Աղայանը հիացած է ժողովրդի իմաստնությանը, հուզական հագեցվածությամբ տեքստ է շարադրում դրանով ընթերցողին վարակելու և նրանում առկա ճշմարտությունը համոզիչ դարձնելու համար: Հարկ է նշել, որ Գ. Լեբոնը նույնպիսի համոզվածությամբ մատնանշում է նաև մարդկանց գիտակցության ու հոգու մեջ անրացած գաղափարների վտանգավորությունը և դրանցից ազատվելու դժվարությունը. «Но не во власти людей остановить ход идей, когда они уже проникли в душу; тогда нужно, чтобы их эволюция завершилась. Защитниками их чаще всего являются те, которые намечены их первыми жертвами. По отношению к идеям мы только бараны, покорно идущие за вожатым, ведущим нас на бойню. Преклонимся пред силой идеи. Когда она уже достигла известного периода своего развития, то нет уже ни рассуждений, ни доказательств, которые могли бы ее победить. Чтобы народы могли освободиться из-под ига какой-нибудь идеи, нужны века или насильственные революции, а иногда и то и другое»²¹:

Եվ հեքիաթում ամեն ինչ ակնհայտորեն մտածված է այնպես (անկախ համոզիչ լինել-չլինելուց), որ շատերն են դառնում (օրինակ՝ Վաչագանի հետ գերության մեջ հայտնվածները) Անահիտի գաղափարը փառաբանողներ: Սակայն այսքանն ասես քիչ էր համակեցական դրվածքների և օրինաչափությունների վերանայման մեջ, և հեղինակն ավելի է առաջ գնում: Նա արդեն առաջին հայացքից անհույս սիրահարված արքայազնի հետ ակնհայտ համախոհությամբ ստեղծագործության տեքստ է մուծում իմաստուն լինելու հավանությամբ ժողովրդական-սիրողական մակարդակի մի խոսք ու զրույց՝ հովիվ-նախրչի-թագավոր անհարկի համադրությամբ²²: Նույնքան ակնհայտ է նաև, որ իր այդ անլուրջ դատողություններով Վաչագանը փորձում է հարթել իր և Անահիտի սոցիալական պատկանե-

20 Лебон Г., Психология народов и масс, М., 2019, с. 106.

Թարգմանությունը՝ ըստ բովանդակության. «Գաղափարներն ազդում են վարքագծի վրա միայն այն բանից հետո, երբ վերածվում են զգացմունքների»:

21 Նույն տեղում, էջ 120:

Թարգմանությունը՝ ըստ բովանդակության. «Բայց մարդիկ ի զորու չեն կանգնեցնելու գաղափարների ընթացքը, երբ նրանք արդեն թափանցել են հոգու մեջ, որովհետև հարկ է, որ ավարտվի նրանց էվոլյուցիան: Նրանց պաշտպանները հաճախ իրենց առաջին զոհերն են: Գաղափարների համեմատ մենք առաջնորդի հետևից հնազանդորեն գնացող ոչխարներ ենք, ով մեզ տանում է սպանդանոց: Խոնարհվենք գաղափարի ուժի առջև: Երբ այն հասնում է իր զարգացման որոշակի էտապին, այլևս չեն կարող լինել ոչ դատողություններ և ոչ էլ փաստարկներ, որոնք ի զորու կլինեն նրան հարթելու: Որպեսզի ժողովուրդները կարողանան ազատագրվել ինչ-որ գաղափարի լծից, անհրաժեշտ են դարեր կամ էլ բռնի հեղափոխություններ, իսկ երբեմն էլ՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը»:

22 Տե՛ս «Հայկական հեքիաթներ», էջ 143-145:

մար է, որ տրվում է որսորդության: Դա անում է ծպտված՝ օրերով բացակայելով պալատից: Ընթացքում ականա ծանոթանում է ժողովրդի կեցությանը, նպաստում երկրում արդար կարգ ու կանոնի հաստատմանն այնքան, որ «Էլ ոչ մի տեղ ո՛չ գողություն էր լինում, ո՛չ մի ուրիշ անարդարություն»²⁵: Ի վերջո, ոչ միայն առողջանում է մարմնով, ծանոթանում ժողովրդի ու երկրի իրական կեցությանը, հասկանում, թե արդար իշխանավորն ինչքան բարիք կարող է գործել, այլ նաև հրաժարվում է ձգնակեցության մտքից: Միով բանիվ՝ համապատասխան գիտակցությամբ և գործնական փորձով նա արդեն իր սոցիալական սանդղակում է:

Օրերից մի օր աղբյուրի մոտ հանդիպում է Անահիտին և անմիջապես հիանում նրա գեղեցկությամբ ու խելոքությամբ: Զարմանալին այն է, որ այդպես տպավորվում է հանրահայտ ճշմարտությունից. հոգնած ու քրտնած մարդուն չի կարելի անմիջապես սառը ջուր տալ: Դա Անահիտի կենսափորձային գյուտը չէր: Մինչդեռ տպավորվելու հիմք կարող էր լինել իր հարցին Վաչագանի սուտ կամ ճիշտ պատասխանելու առիթով Անահիտի՝ արժանապատվության կոչող խոսքը.

«- Որը քեզ արժան կհամարես»²⁶:

Բայց այդպես չի լինում: Դրա փոխարեն՝ վերադարձի ճանապարհին Վաչագանն արդեն գլուխը կորցրած սիրահար է, ով հովիվթագավոր համեմատության խոսքային մանիպուլյացիայով փորձում է նույնացնելով համադրել անհամադրելին²⁷: Միանգամից ակնհայտ է դառնում, որ նա արդեն զրկվել է դասային պատկանելության գիտակցումից, գործող կարգ ու դրվածքի նկատմամբ հարգանքի ու պարտավորվածության ընկալումից: Վաչագանն իր դասին համապատասխան և բավական արդյունավետ ու հեռանկարային գործունեությամբ էր զբաղված, քանի դեռ չէր հանդիպել Անահիտին: **Անահիտը նրան շեղում է այդ ճանապարհից՝ մանիպուլյացնելով ամուսնության հրապուրիչ հեռանկարով ու պարտադրելով իր դասի**

25 Նույն տեղում, էջ 142:

26 Նույն տեղում, էջ 143:

27 Իմիջիայլոց ասենք, որ իր նպատակին հասնելու համար մանիպուլյատիվ վարքագիծ դրսևորելը բնորոշ է այս արքայազնին: Նա շատ լավ գիտակցում է, որ Անահիտի հետ ամուսնանալու իր ցանկությունը համակեցական կարգավորվածությունները պահպանող դրվածքների լրջագույն խախտման է տանում: Բայց ծնողների համաձայնությունը ստանալու և իր նպատակին հասնելու համար հայտարարում է, որ իբր չի ուզում ամուսնանալ և որոշել է մենաստան գնալ: Պարզ է, թե ինչ հարված պիտի լիներ դա թագաժառանգի ծնողների համար:

Կեցության ճշմարտությունը որպես համակեցական երջանկության համադարձան:

Հետաքրքիրն այն է, որ խնամախոսության գնացածներին, որ գիշերակացի էին մնացել, Անահիտը մի հեքիաթ է պատմում արհեստ իմացող թագավորի մասին, «...թե ինչպես նա շատ արհեստներ է սովորել, հետո իր ժողովրդին էլ սովորեցրել և դրանով իր երկիրը շատ հարստացրել»²⁸: Նշանակում է՝ թագավորի համար արհեստի իմացության առաջնահերթության գաղափարն Անահիտի գյուղը չէ, այլ համակեցության կազմակերպման առաջնահերթությունների վերաբերյալ ավանդաբար ձևավորված ժողովրդական (բազմաց) ճշմարտություն, ինչի ծագումնաբանական ճշգրտումն այս դեպքում շատ կարևոր է:

Վաչագանի սիրահարվածության փաստը դառնում է հանրությանը հայտնի: Նա համառում է իր դասին անհամապատասխան վարքագծի մեջ, իսկ հասարակության վերնախավը նրա տարօրինակ որոշումը հասկանալի դարձնող բացատրություն չի գտնում: Անահիտի գեղեցիկ ու խելոք լինելուց բացի՝ Վաչագանն իր ընտրության համար այլ մոտիվացիա չունի և հանուն այդ ընտրության պատրաստ է անցնելու համակեցական բոլոր դրվածքների վրայով: Թագավորն ու թագուհին անգոր են:

Հրճվողը միայն ցածր խավի մարդիկ են. իրենց ներկայացուցիչը կդառնա թագուհի, «և նրա օրոք իրենք շատ բախտավոր կլինեն»²⁹: Տարօրինակ համոզումնք. ասես ինչ-որ անիմանալի ու գաղտնախորհուրդ իմաստությամբ ժողովուրդն արդեն իսկ գիտի, որ երկիրը կառավարելու է ոչ թե թագավորը, այլ իր պես մեկը՝ հրաշքով թագուհի դարձած Անահիտը: Ժողովրդի հրճվանքն անհասկանալի է մեկ այլ առումով ևս. չէ՞ որ մինչ այդ էլ, ինչպես քիչ առաջ տեսանք, թագավորի ու թագաժառանգի ջանքերով ամենքին գոհացնող արդարություն էր հաստատվել երկրում: Հետևաբար անգամ թագուհի դառնալու դեպքում Անահիտն անելու բան չէր ունենալու:

Ուրեմն ո՞րն է գյուղացիների հրճվանքի ենթատեքստը, ինչո՞ւ են նորից փափագում այնպիսի կյանք, որն արդեն ունեն: Նպատակը ակնհայտ է՝ իրենց ներկայացուցչին տեսնել իշխանական բուրգի

28 Նույն տեղում, էջ 149:

29 Նույն տեղում, էջ 146:

վերևում: Նրանք բոլորովին էլ մտահոգված չեն այն ակնհայտ փաստով, որ իրենց սիրելի Անահիտը չունի իշխանություն գործադրելու փորձ և իմացություն, չգիտի՝ ինչ է իշխանությունը, ինչ պարտավորություններ ունի իշխանավորը և այլն: Եվ այդ ամենը շուտով երևում է հարսնախոսության գնացածների, թագաժառանգի, թագավորի ու թագուհու առաջ նրա դրած ամուսնական նախապայմանից, ինչի կենսական նշանակության մասին արդեն ասել են: **Միայն հավելեմ, որ ամենօրյա կեցության կենսաբանական խնդիր լուծելուն ծառայող արհեստի իմացությունը կառավարման գործում ձախողված որևէ թագավորի երբևէ չի փրկել:** Եվ այստեղ խնդիրն ամենևին էլ հեղինակի սոցիալական ուտոպիան չէ: Խնդիրը հասարակագիտական ու պատմական փորձի իմացությունն է. դրա չիմացությունը կամ ոչ ձիշտ իմացությունը եթե թույլատրելի է ժողովրդին՝ բազմությանը, ապա դրա ընդօրինակումը թույլատրելի չէ մտավորականին: Այս դեպքում՝ Ղ. Աղայանին: Իսկ պատմական փորձը բազմիցս ցույց է տվել, որ ժողովուրդը ոչ միայն անսխալական չէ, այլև սխալվում է լրջորեն ու դրա համար հաճախ վճարում ծանր գին: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ այդքանից հետո ժողովուրդը (ինչպես և Վաչագանը) ոչ միայն հավասար մակարդակի սոցիալական սանդղակներում է տեսնում թագավորի ու Անահիտի «նախրչի» հոր գործառույթները, այլև անգամ չարախնդում: Զրուցում են երկու շարքային մարդիկ.

«– Ասում են՝ այդ աղջիկը մարդու չի գնում, և դեռ հայտնի չէ, թե արդյոք մեր թագավորի որդուն կուզի՞, թե՞ ոչ:

– Ի՞նչ ես ասում:

– Հապա դու ի՞նչ ես կարծում...»³⁰:

Այսպես են ստեղծված իրավիճակը սրախոսելով գնահատում այդ երկրի բնակիչները:

Սոցիալական հիերարխիկ կառույցը գլխավար շրջելու անհամոզիչ նախապայմաններն արդեն առկա են: Մնացյալը լինում է ըստ դրանց: Թագավորը դեմ չէ որդու ընտրությանը, որովհետև (ա՛յ քեզ զարմանք...) գյուղացիները շատ ուրախ են դրա համար (Ղ. Աղայանի պարզաբանումն է), թեև գիտակցում է, որ որդու ընտրությունը վիրավորական է երկրի իշխանավորների համար (զարմանալի է, որ

³⁰ Նույն տեղում:

ինքը չի վիրավորվում), ինչը կարող է անհետևանք չմնալ: Անգամ թագուհուն է համոզում, որ որդու ընտրությունը ճիշտ է:

Խնամախոսության գնացածները հիացած են Անահիտով և շատ ուրախ, որ նա, պալատ գնալով, ... ուսում տարածելու իր փորձով կլուսավորի նաև մայրաքաղաքի բնակիչներին և այլն: Գյուղացի թեկուզ գրագետ աղջիկը պետք է գա և լուսավորի մայրաքաղաքը... Չլսված-չտեսնված մի բան մշակույթների ու լուսավորության կենտրոն մայրաքաղաքների պատմության մեջ:

Բայց ոչ միայն այդքանը: Բանն այն է, որ Անահիտով հիացած շրջապատը, ցավոք սրտի, հասարակագիտորեն ավելի գրագետ չէ, քան որ է իր հիացմունքի օբյեկտը: Ողջ համակեցության մեջ չկա մեկը, որ որոշակիորեն գիտակցի սովորական գրաձանաչության և հասարակագիտական գրագիտության տարբերությունը:

Ժողովրդական կենսափորձային ձշմարտությունն ընդօրինակելուց առաջ տեքստի հեղինակը պետք է որ ավելի խորաթափանց լիներ դրա բովանդակության մեջ: Մինչդեռ Անահիտն ունի իդեա-ֆիքս ու շատ հետևողական է ամուսնության իր նախապայմանի մեջ: Հնարավոր է նաև առանց գիտակցելու, բայց նա սոցիալական կառույցը շրջելու, ենթակայից որոշող ու օրենսդիր դառնալու իր հետևողականությամբ խայծ է առաջադրում: Իսկ վերնախավը, ի հրձվանք բազմության, այն կուլ է տալիս՝ չգիտակցելով, որ կորցնում է իր դասի սրբացված սոցիալական սանդղակը՝ իրավասուից վերածվելով իրավագուրկի: Զարմանալի է, որ գոնե Անահիտի չափ դասային շահի գիտակցումով, գրագետ ու հետևողական մեկը չի գտնվում վերնախավում:

Հարց է առաջանում. սիրո՞ւմ է արդյոք Անահիտը Վաչագանին: Ըստ շարադրված տեքստի՝ ոչ: Նա իր սոցիալական շերտի մտայնությամբ և ամենօրյա կեցության հոգսերով ապրող մեկն է և, ըստ դրա էլ, ունի աշխարհի ճիշտ դրվածքի վերաբերյալ ավանդաբար ձևավորված (իր պատմած հեքիաթն արհեստավոր թագավորի մասին) ուտոպիան: Նրա գերխնդիրն այն իրականացած տեսնելն է, և ձակատագիրը ճիշտ տեղում ու ժամանակին նրան է մատուցում իր նպատակի իրագործման համար շատ համապատասխան մեկին:

Ինչ վերաբերում է Վաչագանին, ապա նրա դեպքում ևս սիրո մասին խոսելը միանգամայն անհամոզիչ կլինի: Ինչպես որ ներկա-

յացվում է Ղ. Աղայանի ստեղծագործության մեջ, դա ողջախոհությունն է և ոչ թե սեր: Այլապես Վաչագանը չէր ընտրի դրված պայմանին անխռով ու առանց վիրավորվելու հնազանդվելու տարբերակը, չէր ոտնահարի դասային պահվածքի վարքականոնները, չէր գնա մանիպուլյատիվ ինքնարդարացման՝ փիլիսոփայելով հովիվ-նախրչի-թագավոր սոցիալական գործառույթի նույնության թեմայով և այլն:

Արդեն ասվածին միայն հավելեն, որ Անահիտի և Վաչագանի՝ իրար նկատմամբ ունեցած զգացմունքների բնույթը միջսեռային հարաբերություններում հայտնի մի իրողություն է, որը ճշգրիտ բացատրել է Ե. Ֆրոմը. «Любовь основывается на равенстве и свободе. Если она по сути – подчинение и утрата целостности одного из партнеров, то это мазохистская зависимость, независимо от того, как эти отношения рационализируются. Садизм также часто выступает под маской любви. Власть над другим человеком, если утверждается, что это для его блага, часто выглядит выражением любви, однако ведущий фактор в таких отношениях – наслаждение доминированием»³¹:

Հեքիաթի սյուժեն այնուհետ արդեն այնպես է ծավալվում, որ Վաչագանը դառնում է Անահիտի մոտ աշխատող ու նրա հովանավորության ներքո ապրող, նրան կյանքով պարտական ... թագավոր: Արհեստավոր թագավոր և շատ գեղեցիկ, շատ գրագետ, շատ խելոք, շատ գործունյա, շատ սկզբունքային ու հետևողական, երկիրը բարեհաջող կառավարելու հնտությունների մեջ չգիտես թե երբ և ինչպես վարպետացած Անահիտ թագուհի: Ուրեմն էլ ինչի՞ն էր պետք անձաբակ, կանակատար, ձախողված թագավորը:

Ըստ հեքիաթի գաղափարաբանության՝ պարզվում է՝ ժողովրդի իմաստուն զավակը կարող է իր հովանու ներքո մեծահոգաբար հանդուրժել ձախողված, իր դիրքի ու լիազորությունների մեջ իրեն չարդարացրած վերնախավի, ըստ էության՝ իշխանագուրկ ներկայացուցչին: Մինչդեռ ձախողված թագավորին նորից չեն բերում ու նստեց-

31 Фромм Е., Бегство от свободы, М., 2022, с. 159.

Թարգմանությունը՝ ըստ բովանդակության. «Սերը հիմնվում է հավասարության և ազատության վրա: Եթե նրա էությունը զուգընկերներից մեկի ենթարկվելն է ու ամբողջականության կորուստը, ուրեմն դա մագոիստական կախվածություն է՝ անկախ այն բանից, թե ինչպես են այդ հարաբերությունները ռացիոնալացվում: Սադիզմն էլ նույնքան հաճախ ներկայանում է սիրո դիմակով: Եթե այլ մարդու նկատմամբ իշխանությունը հաստատվում է որպես բարիք նրա համար կամ հաճախ ներկայացվում որպես սիրո դրսևորում, միևնույն է, զխավոր գործոնն այդպիսի հարաբերություններում գերակայության վայելքն է»:

նում գահին, և նրան նույնիսկ հարազատները չեն ներում ու խնայում: Իսկ ժողովուրդը պատրաստ է դրան, միայն թե նա լինի իրենից կամ կյանքի, աշխարհի կարգ ու դրվածքի վերաբերյալ իր մտայնությունը կրող: Վաչագանն այդպիսին է և Անահիտի (նույնն է թե՛ ժողովրդի) իմաստնությունն ապացուցող որոշ փորձությունների միջով բարեհաջող անցնելուց հետո նրա (նույնն է թե՛ ժողովրդի) հովանու ներքո ապրում է անխռով ու երջանիկ:

«Անահիտը» որպես օրինաչափ համակեցական ընթացք է ներկայացնում անհամոզիչն ու անընդունելին: Հետաքրքիր է, որ թագավորական տնից ոչ ոք հարսնացուի առաջ ոչ մի պայման չի դնում, թեև, ըստ հասարակության հիերարխիկ սանդղակի, պայման դնողը պիտի որ իրենք լինեին: Նաև զարմանալի է, որ նրանցից ոչ ոք չի հասկանում, որ Անահիտի բերած գաղափարախոսությունը չի կարող ծառայել երկիր կառավարելուն, չունի կառավարչական որակ:

Եզրակացություններ

Մշակութաբանական քննության նյութ դարձնելով Դ. Աղայանի «Անահիտ» ստեղծագործության բովանդակությունը՝ բոլորովին էլ հակված չենք ընդհանրապես ժխտելու ժողովրդական բանահյուսության, նույնն է թե՛ ժողովրդի աշխարհընկալման մեջ ուսանելի կենսական ճշմարտությունների առկայությունը: Անժխտելի գանձարան է այն նաև մշակութաստեղծ գործունեության ազգային-ավանդական իրողությունների, հնուց անտի ձևավորված արժեքների առումով: **Առանձին ուսումնասիրության ծավալ կարող է ապահովել հայկական հեքիաթների հենց միայն սկսվածքը՝ «Լինում է, չի լինում»-ը՝ իր տարբերակներով: Մարդկային կեցությունն իմաստավորող այդ փիլիսոփայական խտացման առաջին մասը («լինում է») ասես հասցեագրված է փոքրերին, իսկ երկրորդը («չի լինում»)՝ մեծերին: Դրանում նույնքան ակնհայտ է հեքիաթներում ժողովրդի իսկ ձևավորած սոցիալական ուտոպիայի իրոնիկ բացասումը:**

Սակայն որքան էլ ցավալի է ընդունելը, բայց ակնհայտ է նաև, որ ժողովուրդը ևս անսխալական չէ, ինչի վտանգավորությունը հա-

մահավաք հատուցման անխուսափելիություն է առաջացնում: Հետևաբար ժողովրդական ճշմարտությունները չպետք է ընդօրինակվեն մեխանիկորեն՝ հենց միայն այն կանխադրությամբ, որ դրանք, համահավաք կենսավորման լինելով, ապահովագրված են սխալականությունից: Հակառակ դեպքում ամրակայվում են անքննադատ ընդունվող այնպիսի արժեքներ ու համահավաք վարքականոններ, որոնք չեն կարող լուծել համազգային ու համապետական նշանակության խնդիրները: Օրինակ՝ ուշադիր լինելու դեպքում դժվար չէ թագավորի կամ թագաժառանգի համար արհեստի իմացությունը կենսական առաջնահերթություն համարող ժողովրդական ճշմարտության առտնին բովանդակության գոյությունն ու ակտիվությունը նկատել անգամ մեր օրերում:

«Անահիտի» հրապարակումից անցել է գրեթե մեկուկես դար, բայց նույնպիսի համազգային մտածողության ու վարքագծի դրսևորում է, օրինակ, այն, որ երկրի օրենսդիր օրգանի՝ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուներից ընտրողներն ակնկալում են ոչ թե պրոֆեսիոնալ իմացություն ու գործունեության փորձ, այլ ասֆալտապատում, բակերի բարեկարգում, իրենց ունեցած կոմունալ խնդիրների լուծում, բարեգործական օգնություն և այլն: Նման համահավաք վարքագիծն առավել ցավալի է նաև նրա համար, որ ժամանակակից հայ մարդու կրթական ու գրագիտության մակարդակը անհամեմատելի է այն ժամանակների մակարդակի հետ, երբ ստեղծվեց «Անահիտը»: Թվում է, թե այդ ճշմարտությունը վաղուց արդեն չպիտի գործեր: Սակայն ուշադիր լինելու դեպքում մեր ազգային վարքագծի կենսորոշիչ առաջնահերթություններում հնարավոր չէ չնկատել բազմաթիվ այլ մերժելի իրողություններ ևս:

Եվ նորից վերադառնալով «Անահիտի» գաղափարաբանությանն ու նույնիսկ անտեսելով այն թագաժառանգի նկատմամբ գործադրելու փաստը՝ չպիտի անտեսել, սակայն, հետևյալ պատմական գավեշտալի հանգամանքը: Ինչպես բոլոր լուսավորիչները, այնպես էլ Ղ. Աղայանը չէր կարող իմանալ, որ աշխատասիրության, գրագիտության, լուսավորության տարածումն ու հաստատումն էլ չէին հանգեցնելու երջանիկ կեցության այն հանգրվանին, ինչին նպատակաուղղված էր իր ու ժողովրդի ուտոպիան: Փոխարենը դրա հետևանքով ձևավորվելու էր իրեն բնորոշ լավ

ու վատ իրողություններով մի նոր համակեցություն (արդյունաբերական կամ կապիտալիստական), որը դարձյալ չէր լինելու հնուց անտի փնտրվող կորուսյալ դրախտը, ինչի ուտոպիան փայփայում էին ժողովուրդն ու լուսավորիչ մտավորականները:

Սերգեյ Ա. Աղաջանյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են մշակույթի տեսության, հայկական մշակույթի պատմության և նորագույն շրջանի հայ գրականության հիմնախնդիրները: Հեղինակ է մենագրությունների, բուհական ուսումնական ձեռնարկների, տասնյակ հոդվածների, պատմվածքների ու վիպակների:

Էլ. հասցե՝ sergeyaghajanyan@yahoo.com

Summary

**THE VOICE OF THE MAJORITY OR PEOPLE’S INFALLIBILITY
THESIS**

According to fairy tale "Anahit" by Gh. Aghayan

Sergey A. Aghajanyan
Doctor of Philology

Key words – Gh. Aghayan, the voice of Majority, the voice of God, the people, ontology, biological need, class consciousness, social hierarchy, social utopia.

Making the content of Gh. Aghayan's work "Anahit" material for the cultural study I am not at all inclined to deny the presence of life truths in folklore in the worldview of the people. It is also an undeniable treasure of national and traditional realities of cultural and creative activity, long-established values, etc. The beginning of Armenian fairy tales "It happens, it does not happen" in its variations can be separate volume of study. The first part of this philosophical conjugation, which interprets human existence, is addressed to small people, and the second ("it does not happen") to adults. The ironic negation of the social utopia formed by the people in fairy tales is equally obvious in this.

Though it is regrettable to accept this, it is obvious that the people are not infallible, the danger of which generates the inevitability of consolidated compensation. Consequently, folk truths should not be imitated mechanically, only with the postulate that they, being collectively life-supporting, are insured against faults.

Otherwise, uncritically accepted values and consolidated codes of conduct become fixed, which cannot solve problems of national significance. For example, if you pay attention, it is not difficult to notice the existence and activity of the content of folk truth, which makes knowledge of the craft a vital priority for the king or prince even today.

From the moment of publication of "Anahit" almost a century and a half has passed, but the manifestation of the same nationwide thinking and behavior is, for example, that voters expect from candidates for deputies of the legislative body of the country - the National Assembly, not professional knowledge and experience of activity, but asphaltting, landscaping yards, solving their existing communal problems, charitable assistance, etc.

Such collective behavior is even more painful because the level of education and literacy of a modern Armenian is incomparable with the times when "Anahit" was created. It seems that this truth was not to work for a long time. However, if we pay attention, it is impossible not to notice many other unacceptable realities in the vital priorities of our national behavior.

And again returning to the ideology of "Anahit" and even ignoring the fact of its application to the prince, the following curious historical circumstance should not be ignored. Like all enlighteners, Gh. Aghayan could not have known that the spread and realization of diligence, literacy, enlightenment would not have led to the place where people's utopia was aimed at. Instead, as a result, a new coexistence would be formed with its inherent good and bad realities (industrial or capitalist), which again would not be a long-sought lost paradise, the utopia of which was cherished by the people and enlightened intellectuals.

ГЛАС БОЛЬШИНСТВА ИЛИ ТЕЗИС НЕПОГРЕШИМОСТИ НАРОДА

По мотивам сказки К. Агаяна «Анаит»

Сергей А. Агаджанян

Докт. фил. наук

Ключевые слова – К. Агаян, глас большинства, глас Господа, народ, фольклор, бытие, биологическая потребность, классовое сознание, социальная иерархия, социальная утопия.

Исследуя содержание произведения Г. Агаяна «Анаит» с точки зрения культурологии, мы вовсе не задавались целью отрицать жизненно важные аспекты народной мудрости, сконцентрированной в фольклорном творчестве, тем более, что народная философия формировалась в течение веков и подпитывала многие поколения. В свете сказанного, например, любопытен пролог любой армянской сказки, гласящей (в буквальном переводе): «Было да не было». Первая часть его, звучащая, как «было», бесспорно адресована детям, а вторая – «не было» – по всей вероятности – взрослым. Мудрость немногословная, но меткая. В указанной фразе сжата вся ирония народной социальной утопии.

Однако при всей гениальности собирательной народной мысли в нее временами вкрадываются алогические утверждения, наивность, в корне своем несущие ошибочные умозаключения. И не всегда народные поучения могут восприниматься механически и безоговорочно в качестве истины в последней инстанции. Всякая истина подлежит критическому анализу. В противном случае в поведенческом плане как общества, так и индивида могут укорениться такие заскорузлые правила, привычки и понятия, которые, мягко говоря, тормозят всякое развитие, а к тому же не способствуют решению проблем государственного значения. Например, таково местническое сознание в народе, владеющего узким кругом знаний и ограниченными ремесленными навыками, что в корне сужает мировоззрение и во многих случаях широту мышления. Гражданственность в данном случае замещается провинциальностью.

Со времени издания сказки «Анаит» прошло почти полтора века, но внушаемый идеологией сказки подобного рода узкий утилитаризм настолько укоренился в сознании народа, что тот перестал (да и не намеревался) требовать от «правлящих мужей» решения глобальных государственных проблем, а вместо этого стал буквально размениваться на узкобытовые требования (как то: асфальтирование улицы, озеленение двора, проведение электричества и т.д.). И не удивительно, что задачи стратегических масштабов были вытеснены преходящими, а сознание народа так и не поднялось до масштаба государственного мышления.

Возможно, подобный подход к народному правителю и был оправдан в период создания сказки, но не в нынешнее время, когда образовательный и ментальный уровень народа и всего культурного сообщества в своем развитии далеко позади оставил общинно-крестьянские, ремесленно-цеховые взаимоотношения и ценности внутри общин. Мораль и поучения сего повествования – сказки позапрошлого века, на наш взгляд, давно стали анахронизмами.

Естественно, Агаян полтора века назад не мог знать, какие изменения произойдут с обществом и что его просветительские утопии не в состоянии будут обеспечить счастливую жизнь народа, не смогут стать фундаментом государственного устройства: сложатся такие условия, при которых социальное и классовое расслоение общества примет более жесткий характер, и новая экономическая и политическая формация, принявшая лик дикого капитализма, ни в коей мере не будет способствовать осуществлению утопии сказочника, наоборот, все более будет отдалять в сознании людей представление о потерянном рае.

REFERENCES

1. “Aghayan Ghazaros: Gitazhoghovi nyut'er”, Vanadzor, 2010 (**In Armenian**).
2. “Ghazaros Aghayanĉ zhamanakakits'neri husherum”, Yer., 1967 (**In Armenian**).
3. “Hay nor grakanut'yan patmut'yun”, hat. 3, Yer., 1964 (**In Armenian**).
4. **Aghajanyan S.**, Gurgen Maharu ardzaki poetikan, Yer., 2011 (**In Armenian**).
5. **Asatryan A.**, Ghazaros Aghayan: Kyank'n u gortsuneut'yunĉ, Yer., 1940 (**In Armenian**).
6. **Avt'andilyan A.**, Ghazaros Aghayani ashkharhayats'k'ĉ, Yer., 1983 (**In Armenian**).
7. **Fromm Je.**, Begstvo ot svobody, M., 2022 (**In Russian**).
8. **Gurevich A.**, Kategorii srednevekovoj kul'tury, M., 1984 (**In Russian**).

9. **Hakobjanyan A.**, Ghazaros Aghayan: Gegharvestakan zharangut‘yuně, Step‘anakert, 2007 (**In Armenian**).
10. **Lebon G.**, Psixologija narodov i mass, M., 2019 (**In Russian**).
11. **Muradyan H.**, Ghazaros Aghayan (kyank‘n u grakan gortsuneut‘yuně), Yer., 1941 (**In Armenian**).
12. **Shahinyan A.**, Aghayaně hek‘iat‘agir, “Aghayan Ghazaros: Gitazhoghovi nyut‘er”, Vanadzor, 2010 (**In Armenian**).
13. **Terteryan A.**, Hay hayrenaser groghner (yerku dimagits): 1. H. T‘umanyani hayrenasirakan poezian: 2. Gh. Aghayaně yev zhoghovrdakan herosut‘yuně, Yer., 1942 (**In Armenian**).
14. **T‘umanyan Hovh.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 6, Yer., 1994 (**In Armenian**).